6. ***Ներսես Աշտարակեցու*** *76,* ***Տիգրան Մեծի*** *2,* ***Տիգրան Մեծի*** *27* ***բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում***

Վերջին տարիներին Աշտարակ համայնքում սկսվել են բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման և ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման աշխատանքները, որը պայմանավորված է նորաստեղծ համատիրության խելամիտ աշխատելանքով և բնակիչների հետ արդյունավետ համագործակցությամբ:

2019թ.-ին Տարածքային զարգացման զարգացման հիմնադրամի միջոցներով, համայնքի ներդրմամբ, հիմնովին կառուցվեցին Պռոշյան 11, Ա.Մանուկյան 16, Ա.Մանուկյան 9, Տիգրան Մեծի 5 շենքերի 2600 քմ մակերեսով տանիքներ:

Ներսես Աշտարակեցու 76, Տիգրան Մեծի 2, Տիգրան Մեծի 27 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում չի արվել կառուցումից ի վեր: Վերջին հարկերում բնակվող բնակիչների ջանքերով կամ ուժերովչրամեկուսացվել են որոշ հատվածներ, իսկ մնացած մասերը մնացել է ազբոշիֆերով պատված:

Ն.Աշտարակեցու 76 շենքը գտնվում է համայնքի կենտրոնում և բնակեցված է հիմնականում նախկին խորհրդտեսության բանվորների ընտանիքներով և/կամ ներգաղթած մեր հայրենակիցներով:

Տիգրան Մեծի 4 և 27 շենքերը գտնվում են Էջմիածին տանող ճանապարհի վրա, խիտ բնակեցված թաղամասերից մեկում:

Բազմաբնակարան շենքերի ընտրությունը բացի վերոգրյալից, կատարվել է մի քանի չափորոշիչներով

1. *Համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունք*
2. *Համատիրության փայավճարների գանձման բարձր տոկոս*
3. *Բնակչության մասնակցությունը համայնքային տարբեր նախաձեռնություններին*
4. *Տարածքում պատմամշակութային հուշարձանների առկայություն*
5. *Տուրիստական երթուղիներում ներգրավվածություն*
6. *Սոցիալապես անապահով մեծաքանակ ընտանիքների առկայություն*
7. *Հարակից տարածքում դպրոցի, մանկապարտեզի առկայություն*

Նախատեսվում է հիմնանորոգել Ներսես Աշտարակեցու 76, Տիգրան Մեծի 2, Տիգրան Մեծի 27 շենքերի տանքիները:

Աղյուսակ *1*

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական նկարագրություն

	Շենքի հասցեն	Կառուցման տարեթիվ	Տիպը	Ընդհանուր մակերես	Հարկայնություն	Մուտքերի քանակ	Բնակարանների թիվ	Համաշխարհային սեյսմակայունությունը	Բնակիչների թիվը
1	*Ն.Աշտարակեցու փողոց, շենք 76*	*1965*	*քարե*	*1264.6*	*4*	*3*	*44*	*7*	*167*
2	*Տիգրան Մեծի փողոց, շենք 2*	*1987*	*քարե*	*746.4*	*5*	*1*	*20*	*7*	*96*
3	*Տիգրան Մեծի փողոց, շենք 27*	*1985*	*քարե*	*1746.1*	*5*	*5*	*46*	*7*	*229*

Նշված բազմաբնակարան շենքերի տանիքներն ունեն ազբոշիֆերով ծածկույթներ, որոնք տեղադրված են քայքայված, նախկինում չմշակված փայտե կոնստրուկցիաների վրա: Էներգետիկ ճգնաժամի տարիներին շենքերի տանիքներից կտրել և որպես վառելափայտ են օգտագործվել հենակներն ու կանգնակները:
Հեռացվելու է ամբողջ ազբոշիֆերյա տանիքածածկույթը: Ազբոշիֆերները մեկուսացվելու են օրենսդրության պահանջներով սահմանված կարգով:
Հեռացվելու է նաև տարիների ընթացքում տաանիքների տակ բնակչների կողմից կուտակած շինարարական աղբը, հին, օգտագործման համար ոչ պիտանի կահույքը, սարք-սարքավորումները և այլ նմանատիպ, աղբ հանդիսացող զանգվածը:
Նորովի կառուցվելու է փայտյա կրող կոնստրուկցիաներ, որի վրա տեղադրվելու են նոր, ցինկապատ թիթեղյա տանիքածածկույթ:
Փասյտյա կոնստրուկցիաները մշակվելու են հականեխից, հակահրդեհային նյութերով: Իրականացվելու է կազմակերպված ջրահեռացում: Տեղադրվելու են օդափոխության պատուհաններ և այլ անհրաժեշտ դետալներ:
Ջերմամեկուսացման համար իրականացվելու է խարամաշերտ:
Անվտանգության նորմերը ապահովելու նպատակով տանիքի պարագծով կառուցվելու է պաշտպանիչ ճաղաշար, երկարացվելու և երեսապատվելու են օդափոպության, ջեռուցման համակարգի համար նախատեսված խողովակատարրերը:

Ծրագրի արժեքը՝ 58.000.000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում 29.000.000 ՀՀ դրամ
Կատարման ժամկետը՝ 6 ամիս